

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 30

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

12.11.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Հովսեփյանը - մարզպետի տեղակալ
- Ս.Սարուխանյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
- Ն.Ասրյանը, Լ.Վարդանյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Դեմիրճյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերդյանը, Ա.Սահակյանը, Ա.Աղլոյանը, Հ.Հակոբյանը, Հ.Մկրտչյանը, Ա.Եղիազարյանը, Մ.Սարգսյանը- ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Լ.Տեր-Սիմոնյանը -մարզպետի խորհրդական
- Գ.Մարկոսյանը - մարզպետի օգնական
- Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Զեկ. մարզպետի տեղակալներ,
գլխավոր քարտուղարի տեղակալ,
ստորաբաժանումների ղեկավարներ/

2. ա/ Տարածքային կառավարման և զարգացման նախարարի մոտ 05.11.2018թ. մարզպետների մասնակցությամբ կայացած խորհրդակցության ժամանակ ՀՀ մարզպետների հետ առանձին հարցերի քննարկման վերաբերյալ

բ/ Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

ա) Մինչև 20.11.2018թ. ըստ ոլորտների ներկայացնել առաջարկություններ Լոռու մարզի և Մարտակերտի շրջանի միջև փոխհամագործակցության հետագա ծրագրերի վերաբերյալ:

բ) Ակտիվ մասնակցություն ունենալ 17.11.2018թ. նախատեսված «Համահայկական մարաթոն-դրամահավաքին»:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին՝

Ներկայացնել առաջարկություններ մարզային և համայնքային ենթակայության տրանսպորտային ուղևորափոխադրումների մոնիտորինգ անցկացնելու վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Լ.Վարդանյանին՝

Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել մարզպետարանի ենթակայության սոցճառայությունների աշխատանքային գործունեության նկատմամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Հ.Հակոբյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել զանգվածային լրատվամիջոցների կողմից տեղեկատվության ստացման, մշակման և հրապարակումների օրինականության նկատմամբ և միջոցներ ձեռնարկել հանրությանը հնարավորինս օբյեկտիվ և բազմակողմանի տեղեկատվության տրամադրման գործում:

 Invalid signature

X 

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ